


մրկելալ փրկրանքը. որովհետեւ նա լիդոյի*
միւս կողմն կու տատանի: Սակայն երբոր ե-
րեկոյեան վերջալոյսն այլ անհետանայ երկ-
նից վրայ, և ծովակն առնու իւր պղտոր ու
տղմուտ գոյնը, այնուհետեւ Ս. Ղազարու
կզդոյն մէջ դեգերանք, — չնայելով երե-
կոյին այն ամենայն կախարդիչ տեսարանաց,
այն հուսկ ծիրանեգարդ գոլորշեաց՝ որ տա-
կաւ ամփոփուելով կ'երթան դէպ յորեւմուտս

կու գունատին: Կը շիջանքն, — կարող է
միտքը մթապնել և սիրտը սեղմել:

Հետեւ ցամաքէն քանի մի մղոնով, և զուրկ
բաց և ընդարձակ ծովու տեսարանէն. այն
ծովու՝ որ մարդուս արտի այնչափ ընդարձա-
կուծիւն կու տայ. այնուհետեւ Ս. Ղազար,
թէ եւ իմաստասէր բնակաց համար անդոր-
րաւտ դրախտ կու դառնայ, բայց աշխարհի
որդւոյ մ'համար գեղեցիկ զընդան է:



ՀԱՅ ՕՐԱԳՐԱՅ ԼԵԶՈՒՆ

(Տես ԾԳ, 284)

ՏԱՐԱԶԻ ՏԱՐԻՈՅՍ 22 ԹՈՒՈՅՆ

Բ ա ռ ա ր ա ն ն

ՄԵՆՔ լոկ մի թուոյ բառարանը կը
կազմենք հոս, անբաւական լինելով՝ ամէն
օրագրի ամէն թուոց ևս կազմել. և մանա-
ւանդ ցոյցնելու համար՝ թէ ոոսկ մի թիւն
իսկ ինչ ընդարձակ բառարանի կարօտ է:

Գաղղերէնը կամ համարմաքը ընդ գը.

Օ՝ — օ, օվ, օհ
Պօէտ (փիսկ. պուէտ կամ գէթ պոյետ) —
քերթող, բանաստեղծ
Կոմպլիմէնտ — յարգանք, մեծարանք
Կոսլէտ — կող
Արտիստ — արուեստաւոր, արուեստագէտ
Սւիտա — ուղեկիցք, հետևորդ
Կոնցերտ — պարերգ, (թիւն
Ալմինիստացիա — վարդութիւն, տոնեսու-
կոնսորթ — քննութիւն
Կոնտրա — փոխ
Ֆոնդ — դրամակոյտ

Տոպոգրաֆիական — տեղագրական
Էտնոգրաֆիական — ազգագրական
Բիւզժէտ — ելեմուսցոյց
Պիաստր — դահեկան (բոտ արդի գործա-
ծութեան) (թիւն
Ճանդարմէրա — քաղաքապետ գինուորու-
Պոստ — նամակատուն. (բոտ տեղւոյն կըր-
նան գործածուիլ նա և նամականի, նա-
մակատար կամ քղաքիչ)
Պոլիցիա — ոստիկանութիւն
Դիսցիպլինիա — կարգաւորութիւն, բարե-
կարգութիւն
Օֆիցեր — զօրագլուխ. (այժմ՝ նա և ազայ)
Դիրեկտոր — տեսուչ
Մինիստր — հազարապետ կամ նախարա-
րապետ, նախարար
Մինիստրութիւն — հազարապետութիւն,
նախարարութիւն
Պրինցիպ — սկիզբն
Ալիստացիա — յուզումն, շփոթութիւն
Մարգին — մարդպան, կուսակալ (սոսկ շը-
քանուն)

Ունիւսիտական. (զգ. իստ նոյն է ընդ նյ.
ական. երկրորդ ական մ'այլ կը լինին

* Լիդոյ. երկրամէս. այլ լոյսի՝ երկար ցամաք, անջը-
ղեմ ընդ մէջ ծովակի. և Ազգիական մեծ ծովու, մերձ
Ս. Ղազար:

կրկին, սատորիկ անախորժ¹ — միտ-
կցական, անբաժանական

Տիֆ — ժանտատենդ

Տրակտիր — ճաշարան

Պսևգոնիմ — կեղծ անուն

Տենդենցիա — միտումն, յօժարութիւն

Մարկա — նամականագրոյմ²

Գենեթալ մայր — աւագ զօրապետ

Կոկլիշ — հեղձամղձուկ հազ

Լոթկա — բարոյագիտութիւն, իմաստասիրու-

թիւն. (այս բառն այժմ՝ յաճախ կը գոր-

ծածոխի, մանաւանդ օրագրի մի մէջ, իւր

իմաստին հակառակ նշանակութեամբ. և

չգիտենք՝ ինչու, երբ արդէն կան իմաստա-

կոչքիւն և անբարոյականութիւն բառերը):

Կոմիսար — գործակալ, վարիչ

Անգլո-իտալական — անգղիստալ...

Օրգան, միտինգ, բէֆորմ բառից հայերէնը

տես ի Բզմվ. յունիսի:

Քրքերէնք

Վիլայէթ — նահանգ

— Վալի — կուսակալ, նահանգապետ

Մանկազ — գաւառ

— Միւթեսարիֆ — գաւառապետ

Կազա — գաւառակ

— Գայմաշամ — գաւառապետ

Նահիւ — միմակ

— Միւզիբ — ոստիկան, միմակակալ

Մուխթար — գիւղապետ, կամ թաղապետ

(երբ զիւղի մէջ մեկէ աւելի են)

Չաւաշ — նուիրակ

Օնրաշի — տաճարապետ

Մուսախ — օգնական

Բեդէլ ասկերիէ — զինուորական հարկ

Չանկալ — հոսիչ, պատտառաքող

Բազար — շուկայ, վաճառանոց

Փռնի — հացադործ

Ծնկալուք (թրք. չոքմէք) — ծնրադիր

Բուխար (պրս.) — վառարան, ակուք, թանիր

Վրացերէնք

Շաթիր — սուրհանդակ

Մախմուր — թախշ

Մահուդ — չուխայ

« N° 19-դր » — մենք հայերս, ինչ-
պէս շատ անգամ ըստած է, N° րիս կ'ը-
սենք. և ածականը զոյականէ առաջ կը դը-
նենք, « 19դ թիւը »:

« Պ. պ. Գրողների և Շիրուանցի Մեղ-
բումեանների » — մեզ ծանօթ հայերենի
մէջ յառաջադիր մի ածականը (պ.) յետագայ
բոլորին կ'երթայ. այդ եկամուտ կրկնութիւնն
աւելւող է. կամ պ. ամէն անուանց մօտ
այլ զնելու էր: Լաւ եւս, փոխանակ օտար
պարոն բառին՝ չ. տ. կամ տէր, տեաքը
է այլն:

« Ամենապուշ » և այլն. — քանի՜ ա
միմեանց կից. չէր կարելի գրել « ամենա-
պուշ », ինչպէս ամենառատ, ամենազգի և
այլն: Բարդութեան կանոնաց անգիտութիւնը
մեր ազգի օրագրաց մէջ ընդհանուր է, թէ-
պէտեւ զանոնք աւանդող քերականք անպակաս
են...

« Հակաօրինական », — խժական բառ,
և սխալ ըստ բարդութեան. լատպոյն էր ը-
սել « հակառակ օրինաց », կամ մարդոյն
տրուած « օրինազանց » ածականը գործոյն
ևս տալով, կամ նոր բառով « ապօրինի »:

« Միջազգային ». — նիւթական թարգ-
մանութիւն գաղղ. international բառին,
որ ի մեզ ազգի՝ և ոչ ազգաց մէջ կառա-
րուած մի բանի իմաստը կ'ընծայէ. այս պատ-
ճառաւ « Միջագետք » այլ յոգնակի գործա-
ծուած է ի մեզ (գետոց միջի աշխարհն),
ուր յոյնն եղակի կը դնէ: Ուստի՝ յարմա-
րագոյն է թերեւս ըսել « ազգացախառն » —
որպէս մտացածին, բարեացոյցապարտ և այլն. —
կամ ըստ ընդարձակութեան՝ « համաշխարհա-
կան »:

« Խմբագրութեան գրասենեակը դիմում
է այն անձանց, որոնց... » — գիտէինք
թէ մարդիկ զէպ ի սենեակը կը դիմեն.
բայց չգիտէինք և նոր կ'իմանանք թէ սե-
նեակն այլ առ մարդիկ կրնայ դիմել. և թէ

1. Այդպէս է « Գրականական և պատմա-
կան հանդէսն » այլ:


խմբագրութիւնն իւր գրասենեակը պէտք է ղրկէ առ այլս, և ոչ ինքն անձամբ երթայ:

Տարագի սոյն թուոյն մէջ պատրաստութիւն կայ մի կռուոյ, որոյ շեզուին ահա մի ճաշակ. և Մենք այս հայհոյանքին չպատասխանեցինք... զուտ փողոցային հայհոյանքներից... խորին զգոռանքով էք խօսում այդ մարդկանց մասին... վիճել փռնիքներին հետ... բնական բրաւոնոսքեան դէմ... մի շարք փողոցային յիշոցներին, ստերին, և անպատ-

կան գրպարտութիւններին... վերադառնալ կարելի է միայն մարդկանցից... » Այս լեզուն կը գործածէ եղբայր եղբօր դէմ:

Վերջապէս օտիւզուած ենք վկայել՝ թէ շատ անմարտ են մեզ համար Տարագի մէջ սովորաբար շտապած « Պրանսիոյ քաղցր լեզուն, նիստ ու կացը, սովորութիւնները, որ այնքան հարազատ են իրեն » (Տարագ թ. 23, 1895), և զեռ այլ ինչ որ չէ տեսած թէ կան իւր մէջ:

Հ.



Ի ՄԱՅ ՆՈՐԱԹԵՒ ԶՆՃՂԿԱՆ



2 Ա Գ

Ոչ, չեմ կարող, մայրիկ, քեզ հետ թըռչել, ախ. Մանրիկ են գեռ թեւերս՝ և ոյժրս տրկար. Ո՛հ, տես, մայրիկ, ծառիս ճիւղէն մնացի կախ. Օգնէ՛, յանկարծ չընկնիմ ձեռաց մէջ օտարո՛ւ:

Մ Ա Ն Կ Ի Կ

Սիրուն ձագիկ, իջիր հանգչէ դու յիմ գիրկ. Աւելի քան քո մայր՝ տանիմ քեջ խընամ. Ունիմ հատիկ, ունիմ ջրրիկ, վանդակ գիրդ. Հիւր եղիր ինձ մինչ քո թևոց ուժոյ ժամ:

2 Ա Գ

Ընկայ, մայրիկ, յափըշտակեն զիս քեզմէ... Մանկիկ, մանկիկ, համար դալար արեւուդ իմ նորաբոյս մատաղ կենաց խընայէ՛. Թառմին այտերդ վաղ՝ թէ լինիս ինձ անգութ Կ.

Մ Ա Ն Կ Ի Կ

Մի՛ լար, իմ ձագ, ինձ մօտ դուն որբ չըմընաս. Ա՛ռ զայս համբոյր՝ նըշան սիրոյս իմ առ քեզ. Մէ՛ծք այն վատ ձեռին՝ որ տայ քեզ վընաս... Այժմ ինձ պատմէ՛, ի՞նչ է քո ցաւն աղիկէզ՝ Կ